

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱՋՎԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՐՉ ԱԶԵՐԻՆԵՐԻ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒ*

Հրանտ Աբրահամյան

Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի ստեղծումից (1923 թ.) մինչև արցախսահյության ազգային-ազատագրական պայքարի նոր շրջանի սկիզբը (1988 թ.) մարզի կուսակցական և պետական մարմինների ղեկավարներն ու աշխատավորները սիստեմատիկ ենթարկվում էին բռնարարքների և շանտաժի: Իրավորժելով այդ քաղաքականությունը՝ թուրքի ռազմավարությունը հետապնդում էր մի կարևոր նպատակ՝ արցախահյությանը դուրս վրնելի իր բնօրրանից և տարածքը թուրքացնել: Դա հաճախ կատարում էին մարզի կուսակցական և պետական որոշ աշխատողների մասնակից դարձնելով: Այդ տարիներին ԼՂԻՄ-ում կուսակցության մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնում աշխատել են 18 հոգի՝ Սերո Մանույանը (1923 թ. հովհան-նոյենքեր), Հակոբ Կամարին (1923 թ. ղեկտեմբեր-1924 թ. մարտ), Նիկոլայ Սարկիսովը (1924 թ. ապրիլ-օգոստոս), Արտոն Սահակյանը (1924 թ. օգոստոս -1929 թ. օգոստոս), Ավագ Քարամյանը (1929 թ. օգոստոս- 1930 թ. մայիս), Խորեն Կարունցը (1930 թ. հունիս-1931 թ. օգոստոս), Կարոն Գրիգորյանը (1931 թ. սեպտեմբեր-1933 թ. օգոստոս), Բագրատ Բատիկյանը (1933 թ. օգոստոս-1934 թ. մայիս), Պյուտր Պողոսովը (1934 թ. ապրիլ-1937 թ. հոկտեմբեր), Միքայել Մանուկյանը (1937 թ. հոկտեմբեր-1940 թ. և 1946-1948 թթ.), Ա. Ավետիսիսովը (1940-1942 թթ.), Եղիշե Գրիգորյանը (1942-1946 թթ. և 1952-1958 թթ.), Տիգրան Գրիգորյանը (1948-1949 թթ.), Սեղրակ Աբրամովը (1949-1952 թթ.), Նիկոլայ Շահնազարովը (1958-1962 թթ.), Գուրգեն Սելքումյանը (1962-1973 թթ.), Բորիս Կալդրովը (1973-1988 թթ.) և Հեմիկին Պողոսյանը (1988-1989):

Այդ ամբողջ ժամանակաշրջանում մարզն իր ուղեծրով տանողները հիմնականում հանդիսացել են վերոնշյալ այրերը, որոնցից ոմանք հանդիսացել են Աղրբեջանի իշխանությունների կամակատարներ:

11-րդ Կարմիր բանակի գորամասերը, 1920 թ. մայիսին ներխուժելով Լեռնային Ղարաբաղ, այն հայտարարեցին խորհրդային, որը 1921 թ. հովհան 5-ի Անդրեյկրկոմի անօրեն որոշումով համանվեց խորհրդային Աղրբեջանի հոշոտմանը: Քանի որ Աղրբեջանի իշխանությունները անընդհատ հետաձգում էին Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցը, Հայկոմկուսի Կենտկոմի հարցադրման հիման վրա Խորհրդային Աղրբեջանի կենտգործկոմը 1923 թ. հովհան 7-ին հոչակագիր հրապարակեց Լեռնային Ղարաբաղը ինքնավար մարզ հրակելու վերաբերյալ [1]: Նույն թվականի հովհան էլ կազմավորվում է Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի (ԼՂԻՄ) կուսակցության մարզային կոմիտեն, որը ղեկավարելու համար Հայաստանից հրավիրվում է Սերո Մանույանը, ով 1921-1922 թթ. եղել է Խորհրդային Հայաստանի Շիրակի գավառի հեղկոմի նախագահ: 1923 թ. հովհան 16-ին Աղրբեջանի կոմկուսի նախագա-

*Հոդվածն ընդունվել է 20.12.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

հության որոշումով ստեղծվում է կուսակցության մարզկոմ՝ 9 հոգուց բաղկացած [2]: Մի քանի ամիս անց՝ դեկտեմբերի 9-ին, Աղրկոմկուսի քարտուղարության որոշումով Սեր Մանույշյանը ազատվում է ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից և նշանակվում Բարփում լուս տեսմող «Կոմինիստ» թերթի խմբագիր: Լեռնային Ղարաբաղում աշխատած մի քանի ամսվա ընթացքում Սեր Մանույշյանը իրեն դրսնորել է որպես Աղրեջանի իշխանություններին հնագանդ և նվիրված աշխատող, որի համար էլ այդպես շտապ առաջ է քաշվել ու տարվել Բաքու:

1923 թ. հուլիսի 24-ին Աղրեջանի Կենտգործկոմի և ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշումով Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզը կառավարելու համար, մինչև մարզային խորհրդաների առաջին համագումարի հրավիրումը (այն տեղի է ունեցել 1923 թ. նոյեմբերի սկզբին) ստեղծվում է հինգ հոգուց բաղկացած ժամանակավոր հեղափոխական կոմիտե՝ (հեղկոմ) Արմենակ Կարակողովի (Ղարավոյան) նախագահությամբ: Սեր Մանույշյանը, լինելով այդ կոմիտեի անդամ և մարզկոմի 1 քարտուղար, լինում է մարզի բնակավայրերում և գովեստի ճառեր արտասանում Արցախը Աղրեջանի կազմի մեջ թողնելու և նրան հնքնավարություն տալու հարցի շուրջ: Այդ մասին պիտեմատիկ հեռագրում էր Բաքու: Օրինակ՝ հուլիսի 31-ին կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Ս. Կիրովին ուղարկած հեռագրում (պատճեն՝ “Եակինսկի բազուկ” թերթին) հաղորդել է, թե Շուշիում տեղի ունեցած բազմամարդ հավաքք պաշտպանել է Ղարաբաղը Աղրեջանի կազմում թողնելու վերաբերյալ բանաձեռ [3]: Մինչեւ հայտնի է, որ 1920 թ. մարտի 23-ին թուրք ազերիների կողմից Շուշիի հայկական մասը ոչնչացվելուց հետո այստեղ հայ չէր ապրում և, ըստ եռթյան, Ս. Մանույշյանի հիշատակած հավաքք հրավիրել էին այստեղ մնացած թուրքերը: Հետևապես այդ նրանք էին պաշտպանում Արցախ-Ղարաբաղը Աղրեջանի կազմում թողնելու որոշումը:

1923 թ. օգոստոսին Բաքվից մի խումբ կուսակցական և պետական գործիչներ են գալիս Արցախ՝ իրեն հնքնավար մարզի ստեղծման վերաբերյալ հանրաքվե անցկացնելու համար: Այդ խումբը զիսավորում էր Աղրկոմկուսի առաջին քարտուղար Ասադ Կարակը, որի հետ էր Բաքվում քարտուղար Լևոն Միրզոյանը: Սեր Մանույշյանը օգնում է այդ հանձնաժողովին լրացնելու կեղծ փաստաթյուր, թե իրեն մարզում անց է կացվել հանրաքվե: Իրականում այստեղ ոչ մի հանրաքվե չի եղել, պարզապես, այդ շքախումը, լինելով տեղերում, հավաքել են համայնքների ներկայացուցիչներին, նրանց հետ գրույց ունեցել ինքնավարության հարցի շուրջ, հետո արձանագրություն կազմել: Եվ դա էլ համարվել է հանրաքվե: Որոշ տեղեր էլ փորձում էին մարդկանց կաշառել: Այդ մասին վկայում են ժամանակակիցները. նոյնիսկ դեմ գնացողներին ներբակալում ու բանտ էին նետում [4]: Ժամանակակիցները պատմում են, որ նրանք մարդկանց ստիպում էին արձանագրությունները կազմելու իրենց ցանկացած ձևով: Արրամ Կիսիբեկյանը պատմում է. «Արմենակ Ղարավոյանը, Սահակ Դովլարյանը և Ավի Հեյդար Կարակը գալիս են Խանքենդի (Ստեփանակերտ-Հ. Ա.) «հանրաքվե» կատարելու: Այստեղ ևս դեմ են դուրս գալիս Աղրեջանին: Բենիկ Բաքաբյանը խիստ քննադատում է, որի համար Արմենակ Ղարավոյանը, մատ քափ տալով նրա վրա, ասում է՝ լեզուտ քեզ քաշիր և լոիր»: Ապա Կարակը և Լևոն Միրզոյանը գնում են Կարանդայի Գյունե Ճարտար: Այստեղ քանի որ ժողովի քարտուղար ուսուցիչ Սամվել Տեր-Գրիգորյանը հրաժարվում է արձանագրությունը նենգափոխելուց, Կարակի հրամանով նրան և մյուս քարտուղար Արմենակ Բեգլարյանին ներբակալում են և տանում Բաքվի բանտ, որտեղ մի քանի ամիս ենթարկվում են կտտանքների [5]: Եվ այդքանից հետո կուսակցության մարզկոմի քարտուղար Սեր Մանույշյանը, որը շատ լավ տեղյակ էր

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

այդ ամենին, հոկտեմբերի 12-ին Բաքու ուղարկած գեկուցագրում, թաքցնելով ճշմարտությունը, գրում է, թե իրև «ինքնավարության վերաբերյալ ակտը գյուղացիների կողմից ընդունվել է միահամուռ... Գյուղացիները իրենց նասայական որոշումներով ողջունել են ինքնավարությունը և խորհրդային իշխանությունը» [6]:

Եթե Աղրբեջանի իշխանությունների պահանջը հյու-հնազանդ կատարելու և նրանց գործակալներին աջակցելու համար Սերո Մանուցյանին քաշեցին Բաքու, ապա հետագայում, մեկ ուրիշ մարզկոմի քարտուղարի՝ Կարո Գրիգորյանի նկատմամբ կազմակերպվեց նի այնպիսի շոու, որի մասին մարզի բնակիչները երկար ժամանակ չէին կարողանում մոռանալ: Կարո Գրիգորյանը մարզկոմի քարտուղար է աշխատել 1931-1933 թվականներին: Դա շատ ժամը ժամանակաշրջան էր, «ստալինիզմի կատաղած» շրջան: Բավական է նշել, որ միայն 1930-1932 թթ. պատժից մարմինները երկրում ուժեղ հարված էին հասցեի բոլոր ունենոր գյուղացիներին: Հարուստ գյուղացիները աքսորված էին, իսկ ովքեր հասցրեցին իրենց ունեցվածքը վաճառել, զնացին քաղաքը: Մոտ 10 մլն ստալինյան զոհեր կային: 1932 թ. աշնանից սկսված սովոր մեծ չարիք էր: 3-10 մլն մարդիկ մահացել են սովից: Նրանց թիվը միայն 1932-1933 -ին կազմել էր 6-7 միլիոն: Փիլիսոփայական գիտությունների որևէոր, այլովետոր Ա. Պ. Բուտենկոն «Մեծ թեկնան տարին»՝ Ստալինյան հետադիմական շրջադարձ» հետազոտության մեջ նշել է, որ 1929 թվականից մինչև 1933-ը ներառյալ կոլեկտիվացման ընթացքում ոչնչացվել է շուրջ 3 մլն գյուղացիական տնտեսություն: Այդ նշանակում է, որ առնվազն 15 մլն մարդ մահացել է ամօքան: Մոտ 2 մլն-ը իրենց համար «գործ գտան» ինդուստրիալ կարույցներում: Մնացած՝ լավագույն դեպքում վերաբնակվեցին Սիրիոյ անտառահատման վայրերում: Գրեթե մեկ մին աշխատունակ մարդ էլ ճամբարներ քչվեց [7]: Այդ ժամանակաշրջանում մեծ հարված կրեց մանավանդ գյուղատնտեսությունը: 1928-1934 թթ. խոշոր եղջերավոր անասունները կրծատվել են 26,6 միլիոնով (45 տոկոսով), կուերինը՝ 10,3-ով (35 %), խոգերինը՝ 12,1-ով (2 անգամ): 1928 թվականի մակարդակին հասնելու համար պահանջվեց խոշոր եղջերավոր անասունների գիշաքանակի լրման համար՝ 31 տարի, խոգերինը՝ 25, ոչխարներինը՝ 29 [8]:

Հիմա գանք Կարո Գրիգորյանին: Թե նա ինչ է արել, որը թուրք դեկավարության սրտովը չէր, այդ մասին արխիվային նյութերը անմատչելի են: Բայց որ մարզի բնակչության կողմից նա արժանացել էր մեծ հարգանքի, դա ևս փաստ է: Բոլորը նրան դիմում էին ընկեր Կարո: Ինքն էլ սիրում էր ստորագրել՝ Կարո:

Այնուամենայինիվ զարմանում են, թե հանրապետության ազգայնամոլ, մարդասպան պարագլուխները ինչպես էին կարողանում արագորեն «մշակել» որոշ արցանցիների գլուխները և նրանց օգտագործել իրենց կենտոտ նպատակներին հասնելու համար: Արցանցիների նկատմամբ Աղրբեջանի դեկավարության կողմից իրագործված ստորություններին, ծափահարում էին նաև Արցախի կոմունիստները:

Եվ ահա պատմական մի այդպիսի ժամանակաշրջանում, երբ ամբողջ երկիրը ահ ու դողի մեջ էր, Կարո Գրիգորյանը, 1931 թ. սեպտեմբերին ստանձնելով Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, նվիրված կազում է աշխատանքի: Ինչ խոսք, լինում են հաջողություններ, նաև թերություններ: Եվ ահա 1933 թ. ամռանը Բաքվից մի հանձնաժողով է ժամանում Ստեփանակերտ՝ ոմն թուրք Մուզաֆար Նարիմանովի գիշապորությամբ ստուգելու մարզկոմի աշխատանքները: Այդ ստուգումների արդյունքների հիմնա վրա Աղրկոմկուսի կենտկոմը օգոստոսի 14-ին ընդունում է «Ղարշըկոմի աշխատանքների մասին» մի ընդարձակ որոշում՝ 19 կետից բաղկացած: Աղրկոմկուսի կենտկոմը նաև՝ մի քանի քառով հավանություն է տալիս «Ի. Լ. Ղարաբաղի կուսակցական կազմակերպության դրությունը հետազոտած կոմիսիայի

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

աշխատանքներին», ապա՝ Ղարշըկոմի աշխատանքները գտնում է «միանգամայն անբավարար», որի համար «Ղարշըկոմի քարտուղար Կարո Գրիգորյանին հանել աշխատանքից... և նրան են կանչել Աղրկոմկուսի կենտկոմի կարգադրության տակ»: Այդ որոշումով միևնույն ժամանակ աշխատանքից ազատվում է Ղարշըկերահանձի նախագահ Հայկ Սարգսյանը[9]: Այդ գրաւառական վճռում ասված է, որ Կարո Գրիգորյանի ղեկավարած մարզկոմը չի կարողացել զիսավորել «Ղարաբաղի կոմունիստների ազդ ակտիվությունը», անհոգ վերաբերմունք է ցույց տվել «կոլխօզային գյուղատնտեսության սոցիալիստական վերադաստիարակման ու կոլխօզշինարարության» նկատմամբ, չի հոգացել «գյուղատնտեսության մեքենայացման» հարցի վերաբերյալ, «թույլ է եղել կարգապահությունը», «ծնական է եղել կոլխօզների ներսում բրիգադային սիստեմի» հրագործումը, չի պայքարել կոլխնտեսությունները «անհարազատ տարրերից՝ դաշնակների և մուսավարիստների ազենտներից մաքրելու» համար, «բացահայտորեն թերագնահատովել է անասնապահության գարգացման հարցը», որի հետևանքով 1932 թ. միայն Սարտակերտի շրջանում այն պակասել է 3000 զիստով: Խսկ արդյունաբերությունը մատուցել է անուշադրության և որի պատճառով ծեռնարկությունները սիստեմատիկաբար չեն կատարել իրենց «արտադրական և ֆիճանասական պլանները»: Ամենակարևոր՝ «Ի. Լ. Ղարաբաղի կուսեկավարությունը անթուլատրելի ուղադրություն է դարձել գաղափարական ֆրոնտին, կոմունիստների, կոմերիտականների և աշխատավորության բոլշևիկյան ինտերնացիոնալ դաստիարակությանը», որի հետևանքով էլ «հաճախակի են տեղի ունենում վիճաբանություններ հողային հարցի շուրջ»: Ըստ թուրք հանձնաժողովի՝ գյուղում չի հրագործվել կուսակցական աշխատանքների վերակառուցման մասին Կենտկոմի որոշումը և շատ տեղերում չեն ստեղծվել «կուսակցական արտադրական բժիշներ», որոց տեղեր կոմունիստները քարշ են գալիս կուսակային տրամադրություն ունեցողների պոչից»: Նաև նշվել է, որ «Ի. Լ. Ղարաբաղի կուսակցական ղեկավարությունը չի ըմբռնել կուսակցության լոգունգներն ինքնաբնադրատության մասին», «Ծրջկոմի ղեկավարությունը կանգնել է ուղակի ճնշման, հետապնդման, կուսակցությունից վտարման, գյուղադաշտակիցների բանտարկման ուղղու վրա»: Որոշման մեջ գրաւորված է, թե իբրև մարզկոմը չի ղեկավարել կոմունիստների ակտիվությունը, «կուսակցության գիծը ծռվել» է «անասունների համայնացման հարցում», տեղի է ունեցել «խոշոր եղջերավոր անասունների կորուստ», «թերագնահատուցել է կոռպաշխայի հարցը» և այլն: Որոշումը Անդրկոմինորի նախագահ Ս. Բագրիովին հանձնարարում է «երկու տասնօրյա ժամկետում Ի. Լ. Ղարաբաղի տնտեսական և սոցիալ-կուլտուրական շնորհարության կոնկրետ պլան առաջարկություն ներկայացնելու կենտկոմ» և այլն [10]:

Ոնանք կարող են մտածել՝ ի՞նչ կա որ. անց է կացվել սովորական ստուգում և թույլ տրված սիսպանների համար մեղավորները պատժվել են: Ցավոք, եթե այդպես լիներ: Դա բացահայտորեն կազմակերպված շոու էր մարզի մտավորականությանը, կուսակցական և պետական աշխատողներին, ակտիվիստներին «ջախջախնելու» համար: Բաքվի հրահանգով այդ օրերին Լեռնային Ղարաբաղում տեղի էին ունենում կուսակցական բժիշների ժողովներ, որտեղ «հողմացրիկ» էր արվում և մարզի կուսակցական աշխատողների նկատմամբ նորանոր կեղծիքներ հորինվում: Պիտակներ էին կացվում մարդկանց, նրանց ստիպում իրենց մեղավոր ճանաչելու և «խոստանալ հակախորհրդային արարքները»:

Աղրկոմկուսի կենտկոմի Ղարշըկոմի մասին վերոհիշյալ որոշման մեջ նշված է, թե մարզում պլանները սիստեմատիկաբար չեն կատարվել: Օրինակ է բերվել, թե իբրև արտադրական պլանները կատարվել են 41,5-ից մինչև 62,2 սոոկտով [11]: Թուրքի

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

զիսավորած հանձնաժողովը թե որտեղից է թօքրել այդ թվերը, դա միայն նրան է հայտնի: Այսպես՝ եթե 1931 թ. մարզում եղել է 7 գործարան, ապա 1933-ին այդ թիվն աճել է երկուուով, որից 4-ը մարզի տարածքից դուրս էր: Եվ եթե այդ գործարանների արտադրանքը 1931 թ. կազմել է 1 մլ 768 հազար ռուբլի, ապա 1933-ին այն հասել էր 4.919.7 հազար ռուբլու և 1931 թ. ընդհանուր շրջանառությունը 4.741.7 հազար ռուբլուց 1933-ին հասել էր 16.500.0 ռուբլու[12]: Ավելի որոշակի՝ Ղարմետաքստրենտը 1931-ին արտադրել է 16900 կգ գրեժա, հաջորդ տարում այն հասել է 28 հազար կգ-ի: Նույնապիսի հաջողությունների է հասել նաև Ղարմետաքստրենտը:

Մարզում հաջողությունները նշանակալի էին նաև զյուղատնտեսության բնագավառում: 1931 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում եղած 25626 տնտեսությունից 4736-ը, կամ 18,5 տոկոսը, մտել էին կղյունտեսություն [13]: Արդեն 1931 թ. նոյեմբերի վերջին 224 կղյունտեսություններում ընդգրկվել էին անհատական տնտեսությունների 46%-ը[14]: 1932 թ. մարզում կար 62 խոզաբուծական ֆերմա՝ 11 հազար զինով: 1931 թ. աշնանը հանրայնացվել էր մարզի բոլոր անասունների 7,1 %-ը [15]: Այդ ժամանակ Մարտակերտի շրջանում հիմնվել է կառուչուկի պետունտեսություն 80 հա տարածության վրա, որտեղ ցամվել է գվայալա, որի հումքի բազայի վրա Մարտակերտի շրջանի Սալտաղիս ավանում հիմնադրվել է բնական կառուչուկի փորձնական գործարան, որն ուներ միութենական նշանակություն: 1933 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում կազմակերպվել էր 8 պետունտեսություն: 1932 թ. Մարտակերտի շրջանի Մարզուշնան տեղամասում ստեղծվել է մարզում առաջին մեքենատրակտորային կայանը, որը սպասարկում էր 14 կղյունտեսություն 7714 հա վարելահողով [16]: 1933 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի վարելահողերի 51, այդինք 44, ցանքների 44, 1 տոկոսը կենտրոնացված էին կղյունտեսություններում և պետունտեսություններում: 1932 թ. մարզի կղյունտեսությունների ընդհանուր եկամուտը նախորդ տարվա համեմատ կազմել է 84,4 տոկոս: Մեկ աշխարհի արժեքը նախորդ տարվա 99,6 կոպեկի դիմաց հասել էր 1,83 ռուբլու: գրեթե կրկնապատկվել էր: 1933 թ. մարզում կային 146427 խոշոր և մասրեղերավոր անասուն, 26580 խոզ և 7588 սմբակավոր կենդանի, որոնցից համապատասխանաբար հանրայնացված էին 22955, 19518 և 2188 [17]: 1932-1933 թթ. կառուցվել են 21 անասնաշենք, 2 խոզանոց և 53 զյուղատնտեսական բնույթի շինություններ [18]: 1933 թ. նոյեմբերի 6-13-ին Ստեփանակերտի արդյունաբերական հրապարակում կազմակերպվել է անասունների ցուցահանդես, որին մասնակցել է 99 ֆերմա և ցուցահանդես են բերվել 543 զույն անասուն:

Առաջընթացն ակնառու էր նաև մյուս բնագավառներում: Օդինակ՝ 1931 թ. մարզի տեղական խորհուրդների անդամ էին 5160 հոգի, որից 897-ը կին [19]: 1932/33 ուսումնական տարում մարզի առաջին աստիճանի դպրոցներում ընդգրկվել էին 30567 երեխա [20]: 1933 թ. մարզի բյուջեի 44%-ը հասկացվել է լուսավորությանը և եթե 1932 թ. մեկ երեխայի հաշվով ծախսվել է 20 ռ., ապա 1933-ին այն հասել է 28-ի [21]: 1933 թ. մարզում գործում էր 116 փոստային բաժանմունք և հեռախոսային 180 կետ [22]: 1932 թ. օգոստոսին հիմնադրվել է Ստեփանակերտի թատրոնը: Այդ ժամանակ մարզում գործում էին 167 ինքիթ-ըմբեղցարան, 102 ակումբ, 19 մասլ-մամկապատեզ, 10 կինոտեղակայում [23]:

Ինչպես տեսնում եք, 1931-1933 թվականներին, երբ կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար էր Կարո Գրիգորյանը, այդ ժամանակ մարզի տնտեսությունն ու մշակույթն առաջընթաց էր գրանցել, ասել է թե՝ նվիրումով իրագործվում էր կուսակցության հանձնարարությունները, մինչդեռ Բաքվից եկած թուրքական հանձնաժողովը դա տեսնել չի ցանկացել և ամեն ինչ ներկայացրել է զիսիվայր շուրջ տված:

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Օգոստոսի 25-ին հ. լ. Ղարաբաղի մարզային և Ստեփանակերտի շրջանային կուսակտիվը լսել է Աղրկոմկուսի քարտուղար Կուտրյավցի զեկուցումը՝ օգոստոսի 14-ի որոշման վերաբերյալ: Այդ առթիվ «Խորհրդային Ղարաբաղ» թերթում հրապարակված ինֆորմացիայում ամենանողկալի կերպով վարկաբեկվել են մարզի մի շարք կուսական և պետական ազնիվ աշխատողներ: Ելույթի համար հերթագրված 60 հոգուց 26-ին է հաջողվել ամբիոն բարձրամալ և իրենց «Ճաներում» ստորացնել մարդկանց: Նրանք ազ ու ծախ մեղադրում են Շավարշ Վարդունուն, Մելիք Սարգսյանին, ևսոն Գասպարյանին, Աշոտ Մելիքսերյանին, ի. Լազարյանին և ուրիշների: Նրանք պահանջում են՝ պայքարի բովով անցած իրենց աշխատանքին նվիրված այդ մարդիկ «խոստանան իրենց սխալները»: Բայց նրանք ի՞նչ էին արել, որ պետք է խոստանային: Զրպարտիչները աղաղակում էին, թե այդ «տիհաս ղեկավարները» չեն հասկացել «սիրելի առաջնորդ ընկ». Ստոլինի հունվարյան պլենումում արտասանած ... ճառը»[24]: Ու պահանջում էին նրանց հեռացնել կուսակցության շարքերից և պատժել «խստ ձևով»: Իսկ օգոստոսի 28-ին տեղի ունեցած 26 կոմիսարների անվան մետաքսագործական կոմիտինատի, մարզային տպարանի, Ղարեկապոնի, Ղարտեխչինի, Ղարկուսուպոնի, կոռպաքրացիայի և ֆինքանի կուսակցական ու կոմերիտական բժիշների միացյալ նիստում քննարկելով վերոնշյալ որոշումը, պիտակներով և ածականներով վարկաբեկվելով մարդկանց, պահանջում էին ոչ միայն կուսակցությունից հեռացնել Գրիգոր Գրիգորյանին, Առուստամ Առուստամյանին, ևսոն Գասպարյանին և Շավարշ Վարդունուն, այլև նրանց բանտ նստեցնել: Այդ նիստում ելույթ ունեցած բոլոր 22 հոգին էլ, «բոլշևիկյան վճռականությամբ» դնելով հարցը, «պահանջում էին մինչև վերջը մերկացնել բոլոր սխալները, արմատախիլ անել դրանք և բոլշևիկորեն լծվել գործի»: Թերթը հաղորդում է, թե «Միացյալ նիստը դատապարտում է բոլոր նրանց, ովքեր բոլշևիկորեն չեն խոստանում իրենց սխալները և պահանջում են մինչև վերջը մերկացնել և ուղղել թույլ տված բոլոր սխալները»[25]:

Համանան անդեմ, միայն հայստարարություններով ուրած ժողովներ տեղի են ունենում մարզի բոլոր բնակավայրերում, որտեղ «հավանություն» են տալիս թուրքի գրպարտագրին: Այդ ժողովներն անցկացնելու համար Բաքվից և Ստեփանակերտից ուղարկված ներկայացուցիչները իրենց ելույթներում ամեն կերպ փորձում էին համոզել ժողովականներին և հազար ու մի «սխալներ» բարեկ մարզային կուսակցական և պետական ղեկավարության վրա: Անշուշտ, եղել են և ըմբռստություններ, սակայն դրանք անմիջապես լրեցվել են:

Ավելի վրդովեցուցիչ էին Թիֆլիս՝ Անդրեկորկոմ՝ Բերիային, Բաքու՝ Ս. Բագրովին, ստուգող հանձնաժողովի նախագահ Ս. Նարիմանովին ուղարկված նողկալի հեռագրերը: Բերիային հեռագրել են. «Աշխատանքների վերջին շրջանում ի. լ. Ղարաբաղի ղեկավարության կողմից թույլ են տրված կոպտագոյն սխալներ, որոնք արտահայտվել են Լենինյան ազգային քաղաքականության խեղաթյուրման, կոլակության և մանավանդ դաշնակցականների ու մուսավաթականների դեմ մղվող թույլ պայքարի, կոլխոզների կազմատնտեսական ամրապնդման ուղղությամբ տարվող անբավարար աշխատանքի, ինքնաքննադատության ճնշման մեջ և այլն»: Բաքու, հանրապետության ժողովնսորիի նախագահ Ս. Բագրովին ուղարկված հեռագրում ուղակի հակառակ է ասված. «Վերջին տարիներում ի. լ. Ղարաբաղում նշանավոր նվաճումներ են ծեռք բերված շրջանի տնտեսա-կուստուրական շինարարության մեջ»: Ապա՝ այդ նվաճումները սերտ կապված են Աղրբեջանի «նվաճումների հետ և այն օգնության հետ, որը ցույց են տվել ի. լ. Ղարաբաղին Աղրբեջանի կառավարությունն ու աշխատավորները»: Նաև ասված է. «Լեռնային Ղարաբաղի աշխատավորությունը լավ է ճանաչում

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ձեզ, ծեր պայքարի ժամանակից, որը դուք մղել եք Աղրբեջանում և ի. լ. Ղարաբաղում խորհրդային իշխանություն հաստատելու և ամրապնդելու համար» [26]: Դա այն հայտյաց և դաիհի Բագրիովն էր, որը միայն քանական թվականներին հարյուրավոր անմեռ մարդկանց գնդակահարել է Լեռնային Ղարաբաղում: Եզ հիմա Արցախի կոմունիստները երկրպագում են նրան:

Այդ ստեղծված ծանր վիճակից Շավարշ Վարդունին և ուղիշներ կարողանում են հեռանալ Լեռնային Ղարաբաղից և տեղափոխվել Խորհրդային Հայաստան:

Աղյափի «շոտուներ» Աղրբեջանի իշխանությունները հետազայում և բազմից են կազմակերպել Լեռնային Ղարաբաղի իշխանությունների և աշխատավորության դեմ: 1937 թ. ստալինյան բռնությունների ժամանակ ձերբակալվում են ավելի քան 300 հոգի, բանտ նետվում կամ գուլակ քշվում: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Պյոտր Պողոսովը, մարզխորհրդի նախագահ Սուրեն Բաղամյանը և այլ ազնիվ ու նվիրյալ աշխատողներ ոչնչացվեցին անհիմն կերպով: Մանուկը Բաքվի պահանջով նրանց որակավորեց որպես «ժողովրդի թշնամի», «սրիկա», «վլուրդ» և այլն [27]:

Իսկ 1975 թվականին... Երբ մարզկոմի առաջին քարտուղար էր Բաքվի գործակալ Բորիս Կոնրկովը, մարտի 21-ին հրավիրվում է ԼՂ կուսակցության մարզկոմի 6-րդ պլենումը, որտեղ «Աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության հետազա քարելավման ուղղությամբ Ղարաբաղի մարզային կուսակցական կազմակերպության խնդիրների մասին» գեկուցումով հանդես է գալիս ինքը՝ մարզկոմի առաջին քարտուղարը: Այդ պլենումին հրավիրված էին շուրջ 500 հոգի, որոնց շարքում էր նաև ստոլերիս հեղինակը (Վկայական թ. 416): Այդ հակաքում քացի պլենումի անդամ մի քանի հոգուց, ոչ ոք ելույթի ծայն չստացավ: Բաքվում գրված և կուսակցության մարզկոմի պլենումում ընթերցված այդ գեկուցումը մի խայտառակություն էր արցախսահայության համար: Այդ մասին ժամանակին մամուլում խոսվել է: «Պլենումը որոշեց հարցը քննարկել նաև շրջանային կոնֆերանսներում և սկզբնական կուսակցական կազմակերպություններում: Հաջորդ երկու շաբաթվա ընթացքում մարզի քաղկուներում, շրջանային ակտիվներում և բոլոր սկզբնական կուսակցական կազմակերպություններում քննարկվեց այդ հարցը և «հավանություն» տրվեց մարզկոմի «դիրքորոշմանը»: Ու երկու օրինակից կազմված արձանագրություններն ուղարկվեցին մարզկոմ: Հապա մի տեսնեիք արցախցի «ակտիվ կոմունիստները» ի նշ ճառեր էին արտասանում, ի նշ պիտակներ կացնում Բագրատ Ովուրաբյանին, Բոգդան Զանյանին, յոթ պորտանի գովեստներ շրայլում Հեղյար Ավիկի և Բորիս Կոնրկովի հասցեին: Ամենակարևորը՝ նրանց կողմից Աղրբեջանը հայտարարվում է Միությունում «ամենաինտերնացիոնալ հանրապետությունը»: Կային նաև շատ ազնիվ մարդիկ, որոնք առանց երկյուղի խիստ քննադատում են այդ շոուի կազմակերպիչներին: Հիշում եմ. մեր գյուղում (Մարտունու շրջան, գյուղ Քերթ) կուսակցական ժողովում, երբ քննարկվում էր այդ հարցը, կողտնտեսության շինարարական բրիգադայի բրիգադիր Գրիշա Բաքրայանը ասաց. «Միևնույն է. վաղ թե ուշ մենք միանալու ենք մայր Հայաստանի հետ: Առաջարկում ենք բեկանել մարզկոմի պլենումի որոշումը»:

Արցախցի կոմունիստների մի մասի երկիրմի քաղաքականությունը ավելի ցայտուն էր, երբ 13 տարի մարզում «թագավորում» էր Բորիս Կոնրկովը: Կարդացեք ԼՂՀ պետական արխիվի 250-րդ ֆոնդում պահպող մարզկոմի պլենումների և կոնֆերանսների արձանագրությունները վկայում են իրողությունը: Ստորությունը ոմանց համար դարձել էր սպորտություն, մի տեսակ կենցաղ, ապրելու միջոց: Այսպես՝ 1979 թ. հունվարի 13-ին տեղի ունեցած կուսակցության մարզկոմի 28-րդ կոնֆերանսում: Կոնրկովի հաշվետվությունը տևել է 2,5 ժամ: Նա իր ճառը ավարտում է այսպես. «Լեռնային Ղա-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Դարբաղի մարզային կուսակցական կազմակերպությունը իր բոլոր գործերում, ստեղծագործական մտահղացումներում և սոցիալական խնդիրների լուծման ընթացքում զգացել է Աղրեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի և անձամբ ընկեր Հ. Ա. Ալիկի մշտական հոգատարությունը և օժանդակությունը»: Բուռն ծախահարություններ [28]:

Այդ նույն կոնֆերանսում արցախցի մի խումբ կոմունիստներ գլուխ են ջարդում Ելույթ ունենալ: «Ենց այդ «զլուխ ջարդողներից» էր գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղարը: Ես նրան հասուով չեմ ընտրել, այլ բացել եմ պատահած էջ, որտեղ արծանագրված է նրա ելույթը: «Մեր մարզկոմի ձեռք բերած հաջողությունները հետևանք է Աղրեջանի կոմկուսի կենտկոմի և նրա բյուրոյի, առանձնապես կենտկոմի առաջին քարտուղար ընկեր Հեյդար Ալիկի Ալիկի (ծախահարություններ) հոգատարության»: Հետո հեղինակը գովեստի խոսքեր է շռայլում Կոորդովին [29]: Եվ դարարացի կոմունիստները ծախահարում են մեկի համար, ով հետո կպարծենա, թե իր իշխանության օրոք Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը նվազել է 20 տոկոսով:

Արցախահայությունը չհամբերեց այդ ամենը և հանուն իր ինքնության հաստատման ըմբռստացավ ու գնաց բոլոր գոհողությունների:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР 1918-1925. Документы и материалы (այսուհետև Կ истории образования...), Баку, 1989, стр. 152-153.
2. Նոյն տեղում, էջ 159:
3. Նոյն տեղում, էջ 161:
4. Հարություն Թումյան, Ղեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920, Եր., 2008, էջ 308:
5. Աբրամ Կիսիբեկյան, Հուշեր, գիրք 2, Եր., 2011, էջ 145-146:
6. Կ истории образования..., стр. 203.
7. Տես «Երեկոյան Երևան», թ. 39, 14 փետրվարի 1989:
8. Նոյն տեղում, 19 հոկտեմբերի 1988:
9. «Խորհրդային Ղարաբաղ», 20 օգոստոսի 1933:
10. Նոյն տեղում:
11. Նոյն տեղում, 28 օգոստոսի 1933:
12. ԼՂՀ պետական արխիվ (այսուհետև՝ ՊԱ), ֆ. 185, գ. 1, գ. 4, թ. 11 (Այս և հետագա թվերը վերցված է արխիվի գործերի հին համարներից):
13. Նոյն տեղում, ֆ. 370, գ. 3, գ. 118, թ. 33:
14. Նոյն տեղում, ֆ. 3, գ. 3, գ. 70, թ. 9:
15. «Կոմունիստ» (Բաքու), թ. 186, 1932:
16. «Խորհրդային Ղարաբաղ», թ. 100, 1932:
17. ԼՂՀ ՊԱ, ֆ. 33, գ. 43, թ. 48-52:
18. «Խորհրդային Ղարաբաղ», 10 փետրվարի 1934:
19. ԼՂՀ ՊԱ, ֆ. 89, գ. 1, գ. 642, թ. 63:
20. Նոյն տեղում, գ. 139, թ. 93, ֆ. 3, գ. 2, գ. 68, թ. 23:
21. Նոյն տեղում, ֆ. 18, գ. 1, գ. 139, թ. 99:
22. Նոյն տեղում, ֆ. 18, գ. 1, գ. 89, թ. 86:
23. Նոյն տեղում, ֆ. 2499, գ. 1, գ. 28, թ. 8:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

24. «Խորհրդային Ղարաբաղ», 28 օգոստոսի 1933:
25. Նոյն տեղում, §. 192, 2 սեպտեմբերի 1933:
26. Նոյն տեղում, §. 191, 1 սեպտեմբերի 1933:
27. Նոյն տեղում, §. 235, 12 հոկտեմբերի 1937 նաև «Կոմունիստ» (Բաքու), 11 հոկտեմբերի 1937:
28. ԼՂՀ ՊԱ, §. 250, գ. 1, զ. 598, թ. 48:
29. Նոյն տեղում, թ. 91:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Թուրք ազերիների կամայականություններն Արցախում
Հրանտ Աբրահամյան**

1923 թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումից հետո այն միշտ էլ գտնվել է զաղութային վիճակում: Երկրամասը թե՛ մարզկոմի քարտուղար Սերո Մանուկյանի (1923թ.), թե՝ Կարո Գրիգորյանի (1931-1933թ.), թե մյուսների օրոք, Ենթարկվել է դաժան ճնշման, ծաղր ու ծանակի և նսեմացման: Հեղինակը, խոսելով այդ մասին, համոզիչ և կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, թե Ադրբեջանի իշխանությունները ինչպես են իրենց ազգայնամոլ քաղաքականությունը հիմնավորել մարզում և նրա կուսակցական կազմակերպությանն ու բնակչությանը պահել ստրկական վիճակում: Դրանցից ազատվելու միակ ելքը արցախահայության ընբոստացումն էր Ադրբեջանի բռնատիրության դեմ:

Բանալի բառեր՝ Լեռնայի Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Ադրբեջան, բռնություններ, հետապնդումներ, կեղծիքներ, կուսակցության մարզկոմի քարտուղարներ:

РЕЗЮМЕ Произвол турок-азербайджанцев в Арцахе Грант Абрамян

После формирования автономного округа Нагорного Карабаха в 1923 году, Карабах всегда находился в колониальной ситуации. Регион под руководством секретаря Серо Мануцяна (1923), Каро Григоряна (1931-1933 гг), а также при других марзпетах подвергался жестким давлениям, насмешкам и унижениям. Говоря об этом, автор убедительными и конкретными примерами показывает, как азербайджанское правительство обосновывало свою националистическую политику в регионе и держало партийные организации и население в рабстве. Единственным способом избавления от всего этого было восстание против тирании Азербайджана.

Ключевые слова: Нагорно-Карабахская автономная область, Азербайджан, насилия, преследования, мошенничество, секретари региональных комитетов партии.

SUMMARY

The Turkish-Azeri tyranny in Artsakh Hrant Abrahamyan

After the formation of the autonomous region of Nagorno-Karabakh in 1923 it was always in the colonial situation. Under the leadership of secretary Sero Manutsyan (1923), Karo Grigoryan (1931-1933), or other marzpets (governors), the region being under severe pressure had been a subject of mockery and humiliation. Dwelling upon this period, the author using concrete examples demonstrates the way the Azerbaijani government based its nationalist policy in the region and kept the party organizations and the population in a slavery. The only way to get rid of all this was a revolt against the tyranny of Azerbaijan.

Keywords: *Nagorno-Karabakh Autonomous Region, Azerbaijan, violence, harassment, fraud, secretaries of Regional Committees of Parties*